ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
СОЮЗ ЖУРНАЛИСТОВ АРМЕНИИ
JOURNALISTS UNION OF ARMENIA

0010 ՀՀ, Երեւան, Պուշկինի փ. 3/1. Հեռ. 561276
0010 РА, Ереван, ул. Пушкина 3/1. Тел.: 561276
0010 RA, Yerevan, st. Pushkin 3/1. Tel.: 561276

"10", դեկտեմբեր, 2018թ.

Հայաստանի Հանրապետության քննչական
կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

Արդեն տնական ժամանակ է, որ Քննչական կոմիտեն չի վերադարձնում Yerevan.Today լրատվական կայքից առգրավված տեխնիկան՝ դրանով իսկ խոչընդոտելով լրատվամիջոցի բնականոն աշխատանքին:
Մտադրություն չունենալով միջամտել իրավապահ մարմինների աշխատանքին՝ չենք անդրադառնում ձեր գործողությունների իրավաչափությանը:
Արդեն իսկ ստեղծվել է շատ տարօրինակ, 21-րդ դարին ու քիչ թե շատ գործող քաղհասարակություն ունեցող երկրի պահանջներին հակասող նախադեպ, երբ իրավապահները կարող են, փաստորեն, ոչ այնքան հիմնավոր կասկածով մտնել լրատվամիջոց, խուզարկություններ կատարել ու առգրավել գույքը: Պարզապես անթույլատրելի է լրատվամիջոցին տեխնիկական նեղություն տալ՝ առանց լրջագույն հիմնավորումներ ունենալու:
Ամենևին չենք ցանկանում մտածել, որ առգրավումից շուրջ 3 ամիս անց կայքի տեխնիկան չի վերադարձվում՝ միտում ունենալով հնարավորինս երկար խափանել լրատվամիջոցի բնականոն գործունեությունը կամ ճնշել, լռեցնել, բարոյալքել նրան, սակայն անորոշ ու չպարզաբանված այս իրավիճակը կարող է տարբեր մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ:
ՀՀ ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանը շուրջ 2 ամիս առաջ՝ հոկտեմբերի 16-ին, հայտարարել էր. «Պարզվել է շրջանակը՝ ովքեր են գաղտնալսել, ովքեր են պատվիրել...»:
Եթե պարզվել է, ուրեմն գոնե իրենց համար բացահայտվել է, որ Yerevan.Today-ը կապ

չունի այդ գործի հետ. այդ դեպքում ուրեմն ինչո՞ւ չի վերադարձվում լրատվամիջոցի տեխնիկան:
Մասնագետները նշում են, որ նմանատիպ փորձաքննությունները կատարվում են երկու-երեք ժամում, իսկ Yerevan.Today-ի տեխնիկան փորձաքննում են երեք ամիս շարունակ:
Բացի այդ, Քննչական կոմիտեն հոկտեմբերի 26-ին հայտարարել էր, որ ձեռք է բերել համակարգչային տարբեր կրիչների վրա պահվող տեղեկատվության առգրավման և հետազոտման համար անհրաժեշտ սարքավորումներ: Դրանցով կկարողանան պատճենավորել առգրավվող օբյեկտներում առկա տեղեկատվությունը, և տեխնիկան առգրավելու կարիքը վերանում է: Ինչպես նաև հայտարարվեց, որ առգրավված տեխնիկան հնարավոր է վերադարձնել ոչ թե ամիսների ընթացքում, այլ մի քանի օրում առավելագույնը:
Ինչպես տեսնում ենք, հայտարությունից անցել է 45 օր, բայց տեխնիկան դեռ չի վերադարձվել: Լրատվամիջոցի համար այդ տեխնիկան չափազանց մեծ կարևորություն ունի, առավել ևս, որ ըստ Yerevan.Today-ի ներկայացուցիչների՝ խմբագրության գործունեության համար խիստ կարևոր նյութեր են պահվել դրանցում:
Հայաստանի ժուռնալիստների միությունն ակնկալում է այս հարցերի ու մտահոգությունների հանգամանալից մեկնաբանությունը և խնդրում վերադարձնել Yerevan.Today-ի տեխնիկան. լրատվամիջոցի գործունեությունը, առանց այն էլ, տևական ժամանակ խաթարված է:

Հարգանքներով՝
Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Կարեն Մելքոնյան